

Ընդունված է
Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի
ուսանողների
2018 թ. փետրվարի 19-ին կայացած
ընդհանուր ժողովում
ՈԻԽ նախագահ՝ *Լ. Մարգարյան* Լ. Մարգարյան

**«ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

(փոփոխություններով և լրացումներով)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնադրությամբ կարգավորվում է «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ հաստատություն) ուսանողական ինքնավարության մարմինների ձևավորումը, գործունեությունը, լիազորությունները, ինչպես նաև հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ կապված իրավահարաբերությունները:

1.2 Հաստատության սովորողների ընդհանուր ժողովը իրավասու է սույն կանոնադրության հիման վրա ստեղծել հաստատության ուսանողական խորհուրդ և ընդունել իր կանոնադրությունը՝ դրան համապատասխան իրականացնելով սովորողների ինքնավարությունը:

1.3 Ուսանողական խորհուրդը ապաքաղաքական, ապակուսակցական կազմակերպություն է, ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան հաստատության գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու և սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ հաստատության կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով:

1.4 Ուսանողական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որի գործունեության հիմնական սկզբունքներն են կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը:

1.5 Սովորողները կարող են ըստ իրենց նախասիրությունների ստեղծել նաև ակումբներ, միավորումներ, որոնք նույնպես հանդիսանում են սովորողների ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ և գործում են սույն կանոնադրության 1.4-րդ կետում շարադրված սկզբունքների համաձայն:

1.6 Ուսանողական խորհուրդը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, քոլեջի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.7 Ուսանողական խորհուրդը կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ, որոնց վրա ուսանողական խորհրդի հայերեն անվանումը պարտադիր է:

1.8 Ուսանողական խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել Հայաստանի և օտարերկրյա կրթական հաստատությունների սովորողների ինքնավարության մարմինների ու կազմակերպությունների հետ:

2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Սովորողների ինքնավարության հիմնական խնդիրներն են՝

- 1) ապահովել ուսանողների մասնակցությունը քոլեջի կառավարմանը.
- 2) պաշտպանել սովորողների իրավունքները և շահերը.
- 3) ներկայացնել հաստատության կառավարման համապատասխան մարմիններին սովորողներին առնչվող հարցեր.
- 4) նպաստել համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը.
- 5) նպաստել ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը.

- 6) նպաստել հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը.
- 7) օժանդակել սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը.
- 8) օժանդակել սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը.
- 9) օժանդակել սովորողների առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աջակցելը և սովորողների նախաձեռնությունների ապահովմանը.
- 10) օժանդակել հաստատությունում սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը.
- 11) օժանդակել սովորողների, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանը:

3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆԸ (ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ)

- 3.1** Հաստատության սովորողների ինքնավարության բարձրագույն մարմինը հաստատության սովորողների պատվիրակների ընդհանուր ժողովն է /այսուհետ՝ ժողով/:
- 3.2** Ժողովի պատվիրակներ են ընտրվում յուրաքանչյուր խմբի 10 ուսանողից 4-ը:
- 3.3** Ընտրությունները կատարվում են ըստ խմբերի սովորողների ժողովներում: Ժողովն իրավագոր է, եթե ներկա են խմբի սովորողների կեսից ավելին: Ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, եթե 2 անգամ հրավիրված ժողովին չի մասնակցում սովորողների կեսից ավելին, ապա ընտրական հանձնաժողովը կարող է որոշում ընդունել և ընտրությունները կազմակերպել ներկա սովորողների մասնակցությամբ: Ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:
- 3.4** Սովորողների պատվիրակների ընդհանուր ժողովը հրավիրվում է առնվազն երկու տարին մեկ անգամից ոչ պակաս՝ ուսանողական խորհրդի կողմից: Արտահերթ ժողով

կարող է հրավիրվել ուսանողական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով կամ հաստատության տնօրենի նախաձեռնությամբ:

3.5 Հաստատության սովորողների պատվիրակների առաջին ընդհանուր ժողովը որոշում է կայացնում՝

- 1) հաստատությունում ուսանողական խորհուրդ՝ սովորողների ինքնավարության գործադիր մարմին, ձևավորելու մասին.
- 2) սույն կանոնադրության հիման վրա հաստատության ուսանողական խորհրդի կանոնադրությունը և ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.
- 3) ուսանողական խորհրդի թվակազմը հաստատելու վերաբերյալ.
- 4) ուսանողական խորհրդի ձևավորման աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կազմը (այսուհետ՝ ընտրական հանձնախումբ) հաստատելու վերաբերյալ:

3.6 Հաստատության սովորողների պատվիրակների ընդհանուր ժողովը՝

- 1) հաստատում է սովորողների ինքնավարության մարմնի կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ և լրացումներ. որոշումներն ընդունվում են, եթե կողմ են քվեարկում ներկաների 2/3-ը.
- 2) քննարկում է ուսանողական խորհրդի և նրա նախագահի տարեկան հաշվետվությունները և բաց քվեարկության միջոցով տալիս է համապատասխան գնահատական (անբավարար, բավարար, լավ).
- 3) սովորողների պատվիրակների ընդհանուր ժողովը իրավագոր է, եթե ներկա են պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին.
- 4) քննարկում է սույն կանոնադրությամբ իր լիազորությունների սահմաններում նախատեսված այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է ուսանողական խորհրդի համար:

4. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

4.1 Ուսանողական ինքնավարության մարմինների ընտրությունների կազմակերպման նպատակով ձևավորվում է ընտրական հանձնախումբ՝ յուրաքանչյուր խմբի խորհրդի կազմում չընդգրկված մեկական ուսանողներից:

4.2 Ընտրական հանձնախումբն իր առաջին նիստում ընտրում է նախագահ: Նախագահն ընտրվում է ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ձևը որոշում է հանձնախումբը:

4.3 Ընտրական հանձնախումբը լիազորություններն իրականացնելիս համագործակցում է մանկավարժական խորհրդի և տնօրինության հետ:

4.4 Ընտրական հանձնախումբը՝

- 1) կազմակերպում է խմբի խորհուրդների ընտրությունները և հաստատում խմբի ուսանողական խորհուրդների կազմերը,
- 2) խմբի խորհուրդների ընտրությունների արդյունքների հիման վրա հաստատում է հաստատության ուսանողական խորհրդի կազմը (այսուհետ՝ ուսանողական խորհուրդ),
- 3) կազմակերպում է ուսանողական խորհրդի նախագահի ընտրությունները:

5. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5.1 Հաստատությունում սովորողների ինքնավարության սկզբնական կառուցվածքային օղակը խմբի ընդհանուր ժողովն է, որը ձևավորում է խմբի ուսանողական խորհուրդ: Խորհուրդը կազմվում է տվյալ խմբից ընտրված երեքից հինգ սովորողներից, երկու տարի լիազորությունների ժամկետով:

5.2 Խմբի ընդհանուր ժողովում առավել ձայներ հավաքած խմբի խորհրդի անդամը համարվում է խմբի ուսանողական խորհրդի նախագահ: Առավելագույն հավասար ձայներ ստացած խորհրդի անդամների դեպքում՝ խորհրդի նախագահը որոշվում է ընտրական հանձնաժողովի կողմից վիճակահանությամբ:

5.3 Խմբի ուսանողական ընդհանուր ժողովը հրավիրվում է ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան կիսամյակը մեկ անգամ՝ կուրսղեկի, խմբի ուսանողական խորհրդի, խորհրդի նախագահի, խմբի ուսանողների 1/3-ի նախաձեռնությամբ:

5.4 Խմբի ուսանողական ընդհանուր ժողովը լսում է խմբի խորհրդի և նրա նախագահի տարեկան հաշվետվությունը:

5.5 Խմբի ուսանողական խորհուրդը՝

- 1) նախաձեռնում և խմբի կուրսղեկի հետ կազմակերպում է խմբի սովորողների առաջադիմությանը, առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլն.
- 2) համագործակցում է քոլեջի ուսանողական խորհրդի հանձնախմբերի հետ՝ միջոցառումների կազմակերպման համար.
- 3) իրականացնում է սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

5.6 Խմբի ուսանողական խորհրդի նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել այլ խումբ կամ այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու, քոլեջից ազատվելու կամ նրան անվստահություն հայտնելու դեպքում՝ խմբի ժողովի մասնակիցների 2/3-ի որոշմամբ:

5.7 Խմբի ուսանողական խորհրդի նախագահին անվստահություն հայտնելու դեպքում խմբի ընդհանուր ժողովը լսում է նրա բացատրությունը:

5.8 Խմբի ուսանողական խորհրդի նախագահին անվստահություն հայտնելու հարցը քննարկման է դրվում՝

- 1) սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունները գերազանցելու կամ պարտականությունները չկատարելու դեպքերում:

6. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ

6.1 Քոլեջի ուսանողական խորհուրդը ձևավորվում է հաստատության բոլոր խմբերի խմբային ժողովներում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրված մինչև երկու ներկայացուցիչներից:

6.2 Քոլեջի ուսանողական խորհրդի նիստին, խորհրդակցական ձայնի իրավունքով, կարող են մասնակցել կուրսղեկները:

- 6.3** Քուլեջի ուսանողական խորհրդն իր կազմից 2 տարի ժամկետով ընտրում է ուսանողական խորհրդի նախագահ, նախագահի տեղակալ, քարտուղար , հանձնախմբերի համակարգողներ:
- 6.4** Ուսանողական խորհրդի նախագահ չի կարող առաջադրվել ՀՀ որևէ քաղաքական կուսակցության անդամակցող թեկնածու:
- 6.5** Ուսանողական խորհրդի նախագահը ընտրվում է փակ, գաղտնի քվեարկության միջոցով, ձայների պարզ մեծամասնությամբ, սակայն ոչ պակաս, քան ուսանողական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելիի մասնակցությամբ: Ուսանողական խորհրդի նախագահի տեղակալը, քարտուղարը և հանձնախմբերի նախագահները ընտրվում են բաց քվեարկությամբ:
- 6.6** Ընտրության արդյունքները քվեարկությունից անմիջապես հետո ամփոփում և հայտարարում են:
- 6.7** Ուսանողական խորհրդի նախագահն ընտրվում է երկու տարի ժամկետով (նույն անձը կարող է վերընտրվել, սակայն ոչ ավելի, քան երկու անգամ):
- 6.8** Ուսանողական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստեր հրավիրվում են խորհրդի նախագահի, տնօրենի, տնօրենի՝ դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալի նախաձեռնությամբ և (կամ) ուսանողական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով և հաստատության սովորողների պատվիրակների ընդհանուր ժողովի որոշմամբ:
- 6.9** Քվեարակության անցկացման կարգը (փակ կամ բաց) որոշում է ուսանողական խորհուրդը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար թվով ձայների դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:
- 6.10** Ուսանողական խորհրդի նիստերը արձանագրվում և հրապարակվում են ուսանողական խորհրդի որոշման համաձայն:
- 6.11** Ուսանողական խորհրդի գործունեությունը սույն կանոնադրության համաձայն կազմակերպելու նպատակով ստեղծվում են համապատասխան մասնագիտացված հանձնախմբեր:

6.12 Մասնագիտացված հանձնախմբերը կազմավորվում են ըստ գործունեության բնագավառների (ուսումնադաստիարակչական, ռազմամարզական, առողջապահական, սոցիալական, մշակութային, կարգապահական, իրավական, տեղեկատվական և այլն):

6.13 Մասնագիտացված հանձնախմբերի պարտականություններն ու լիազորությունները սահմանվում են ուսանողական խորհրդի կողմից: Հանձնախմբերի կազմում ուսանողական խորհրդի առաջարկությամբ կարող են ընդգրկվել նաև դասախոսներ և համապատասխան բնագավառների մասնագետներ:

7. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Ուսանողական խորհուրդը՝

- 1) քոլեջի ուսանողների կազմից 3 թեկնածություն է առաջադրում լիազորված մարմնին՝ քոլեջի կառավարման խորհրդի կազմում ընդգրկվելու համար.
- 2) կարող է խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել մանկավարժական խորհրդի նիստերին՝ սովորողներին վերաբերող ուսուցման բովանդակության, գիտելիքների յուրացման որակի, նրանց հետ տարվող աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկումներին.
- 3) կարծիք է ներկայացնում հաստատության մանկավարժական խորհրդին՝ առանձին դեպքերում հաստատության ներքին կարգապահական կանոնները խախտելու համար սովորողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու վերաբերյալ.
- 4) կարող է ստեղծել ուսանողական ակումբներ, խմբակներ և աջակցում է դրանց աշխատանքների կազմակերպմանը.
- 5) մասնակցում է համայնքին օժանդակող ծրագրերի իրականացմանը.
- 6) արձագանքում և իր իրավասությունների սահմաններում ընթացք է տալիս սովորողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին ու դիմումներին.
- 7) աշխատանքներ է տանում սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ.

8) աջակցում է հաստատության կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի և տնօրինության կողմից սովորողներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանը.

9) իրականացնում է քոլեջի և սույն կանոնադրություններից բխող այլ լիազորություններ:

7.2 Ուսանողական խորհուրդը առաջարկություններ է ներկայացնում հաստատության տնօրինությանը՝

1) հաստատության ներքին կարգապահական կանոնների.

2) սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման.

3) դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման վերաբերյալ:

7.3 Ուսանողական խորհուրդը հաստատության կառավարման խորհրդի և խորհրդակցական մյուս մարմինների հետ համատեղ՝

1) պաշտպանում է սովորողների իրավունքները հաստատությունում.

2) նպաստում է քոլեջի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը.

3) համագործակցում է կուրսղեկների հետ՝ կուրսղեկի աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումներն իրականացնելու համար:

8. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Ուսանողական խորհրդի նախագահը՝

1) ղեկավարում է խորհրդի գործունեությունը՝ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում.

2) հանդիսանում է սովորողների ներկայացուցիչը հաստատության մյուս մարմինների հետ փոխհարաբերություններում.

3) հաշվետվություն է ներկայացնում սովորողների ընդհանուր ժողովին՝ ուսանողական խորհրդի և իր կատարած աշխատանքների մասին.

4) համակարգում է խմբերի ուսանողական խորհուրդների և հանձնախմբերի գործունեությունը, ապահովում է խմբերի խորհուրդների և հանձնախմբերի միջև համագործակցությունը.

5) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իրականացնում է այլ լիազորություններ:

8.2 Ուսանողական խորհրդի նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են այլ հաստատություն տեղափոխվելու, քոլեջն ավարտելու, քոլեջից ազատվելու, հրաժարական տալու, ինչպես նաև նրան անվստահություն հայտնելու դեպքերում /այդ դեպքում հայտարարվում է ուսանողական խորհրդի նախագահի նոր ընտրություններ/:

Անվստահություն հայտնելու նախաձեռնությունը կարող է քննարկվել, եթե այն նախաձեռնվում է ուսանողական խորհրդի անդամների 1/3-ի կողմից:

8.3 Ուսանողական խորհրդի նախագահի անվստահության հարցը քննարկվում է ուսանողական խորհրդում, որտեղ լսվում է նրա (նախագահի) կողմից բերվող մեկնաբանությունը հարցի կապակցությամբ:

8.4 Ուսանողական խորհրդի նախագահի անվստահությունը ընդունվում է՝

- 1) սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների գերազանցման դեպքում կամ իր վրա դրված պարտականությունները անհարգելի պատճառներով չկատարելու համար:

8.5 Անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշումը ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել ուսանողական խորհրդի անդամների 2/3-ը:

9. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Ուսանողական խորհրդի անդամները, ուսանողական խորհրդի նախագահը, հանձնախմբերի անդամները, խմբերը ներկայացնող խորհուրդների անդամները իրենց հաստատության, խմբի, սովորողների ինքնավարության մարմնի անունից հանդես գալիս պետք է պաշտպանեն իրենց հաստատության և ինքնավարության մարմնի իրավունքներն ու օրինական շահերը: